հանդերձելումն, ըստ քանակութեան և որակութեան յանցանացն։ Եւ որպէս դորա եղիցի ոչ միայն վեհ և վերակացու լինել ժողովրդեան, այլ և նմանիլ անարատ և անբիծ հարսին իւրոյ՝ սրբութեամբ վարուց և ուղիղ վարդապետութեամբ արածել զհօտն իւր, այսպէս դորա եղիցին ընտրել և կարգել զայնոսիկ՝ որք առաքինութեամբ և իմաստութեամբ պայծառացեալք արժանի և ընդունակ եղիցին սպասու և սրբազնագործութեան եկեղեցոյ, ըստ կանոնաց և աւանդութեան հարցն սրբոց։ Դորա եղիցի սահմանել և հաստատել դպրատուն ի վարժումն երիտասարդաց և ի տեղեկութիւն սուրբ գրոց. զի մի ի խաւարի շրջեսցին, այլ լուսով աստուածգիտութեան զարդարեալք զօրասցին ի պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ, և հայրենաւանդ սուրբ և ուղիղ դաւանութեան հաւատոցն։

Դարձեալ, հաստատեմք և սահմանեմք ըստ եկեղեցական կանոնաց, ոչ ումեք իշխանութիւն լինել ի վերայ հօտին և ժողովրդեան դորա, ոչ կարգել և ոչ ձեռնադրել առանց դորա հրամանի. այլ և ի սուրբ աթոռս մեր ոչ զոք ընդունել և ոչ զոք ձեռնադրել, և ոչ ումեք վարդապետական կամ եպիսկոպոսական իշխանութիւն տալ՝ առանց դորա խնդրոյ և յանձնարարութեան, որքան կենդանի եղիցի, ի դատաւորաց քաղաքին։

Բայց այս ամենեցուն յայտ եղիցի, զի որպէս մեք առաքելական և հայրապետական իշխանութեամբ երկրաւոր և երկնաւոր բանալեօք ընտրեցաք և ձեռնադրեցաք զդա՝ եպիսկոպոս Լեհաց երկրի՝ ի վերայ ժողովրդեան մերոյ, նոյնպէս և դա որքան կենդանի է՝ ամենայն հնազանդութեամբ առ մեզ շարժեսցի, և ով զք ընտրողութեամբ և օժանդակութեամբ ամենեցուն՝ զաթոռն հայրապետութեան մերոյ յաջորդեսցէ։ Եւ եթէ Թէոդորոս Վարդանեանց եպիսկոպոս Լեհաց երկրին, կամ ներհակ և օրինազանց ճանապարհացն Աստուծոյ կամ անհնազանդ առ սուրբ աթոռս երևեսցի, եկեղեցականքն և ժողովուրդքն Լեհաց երկրի բողոքեսցեն առ մեզ, և մեք ըստ քանակութեան և որպիսութեան յանցանացն՝ դատեմք զնա։ Իսկ եթէ հաստատ և անշարժ ի պահպանութեան պատուիրանաց Աստուծոյ և աւանդութեան հարցն սրբոց մնասցէ, մի պակասեսցի ի դմանէ լիութիւն աստուածային շնորհաց, և բազմապարգև օրհնութիւն՝ զոր միանգամ ընկալաւ. և արժանի եղիցի իբրեւ ըզժիր մշակ և քաջ հովիւ յեկեղեցւոյն Քրիստոսի, լսել ձայնի օրհնութեան և հրաւիրման յերկիր աւետեաց, այսինքն՝ յիմանալի և յաստուածանուէր յանդիմանատես երանութեան և կենսաբեր բնակութեան վերինն Երուսաղեմի. ամէն։

Դարձեալ, գիտելի եղիցի ամենայն առհասարակ հաւատացելոց մեծաց և փոքունց. զի դա ինքն Թէոդորոս Վարդանեանց՝ յերկրէն Լեհաց՝ ի զարմէն Բագրատունեանց, սնեալ ի տիս մանկութեան, վարժեալ և տեղեկացեալ առ ոտս մեր՝ գիտութեան աստուածային գրոց, ըստ չափոյ և կարողութեան իւրոյ. զի որպէս մեծն Մեսրովպ զվարդապետական իշխանութիւնն ընկալաւ ի Սրբոյն Ադտիկոսէ աշակերտէ երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի, որ և զհայ-